ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

06.04.2017 17:29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

Հարգելի փաստաբաններ,

Ելնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի կողմից փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու լիազորությունն իրականացնելիս՝ հայտնաբերված փաստաբանների և նրանց վստահորդների միջև կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագրերի հետ կապված խնդիրները լուծելու անհրաժեշտությունից, ինչպես նաև նկատի ունենալով քաղաքացիական և վարչական գործերով դատական ներկայացուցչություն իրականացնելու ծավալները, հետևաբար և այդ գործերով դատական ներկայացուցչությանն առնչվող իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրի նմուշ հաստատելու անհրաժեշտությունը,

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 04.04.2017թ. թիվ 85-Լ որոշմամբ իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրի հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ տրվել է ոչ պաշտոնական պարզաբանում, ինչպես նաև հաստատվել է «Իրավաբանական օգնություն ցույց տալու հանձնարարության վերաբերյալ» (դատական ներկայացուցչության համար) պայմանագրի նմուշ:

Ձեզ է ներկայացվում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 04.04.2017թ. թիվ 85-Լ որոշմամբ տրված ոչ պաշտոնական պարզաբանումը, ինչպես նաև հաստատված պայմանագրի նմուշը:

<u>Ուշադրություն.</u>*ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 04.04.2017թ. թիվ 85-Լ որոշմամբ հաստատված պայմանագրի նմուշը և ոչ պաշտոնական պարզաբանումները* ***<u>կրում են խորհրդատվական բնույթ</u>*** *և* ***<u>պարտադիր չեն</u>*** *փաստաբանների համար:*

Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի 04.04.2017թ. № 85-Ա որոշումը

Բեռնել իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրի հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ ոչ պաշտոնական պարզաբանումը

Բեռնել «Իրավաբանական օգնություն ցույց տալու հանձնարարության վերաբերյալ» (դատական ներկայացուցչության համար) պայմանագրի նմուշը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })